Արձանագրություն 2

Տաշիր համայնքում 2025թ.-ին ստեղծված մասնակցային բյուջետավորման գործընթացի իրագեկման և առաջարկների ներկայացման փուլերի արդյունքների նիստի

Ք. Տաշիր
02/06/2025թ., 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝

Նաթելլա Մուրադյանը - Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ,

Հանձնաժողովի անդամներ՝

Ասյա Հարությունյան - Համայնքապետարանի աշխատակազմի Սոցիալական աջակցության, առողջապահության, սպորտի, մշակույթի, երիտասարդության և կրթության բաժնի պետ,

Սևադա Սարգսյան - Համայնքի ղեկավարի խորհրդական,

Խաչեն Մանուկյան - «Տաշիրի կոմունալ տնտեսություն և բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն

Համայնքի ակտիվ բնակիչ՝

Ինեսսա Խանադյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Աստղիկ Բարոյան - Համայնքապետարանի աշխատակազմի Զարգացման ծրագրերի, առևտրի, սպասարկման, գովազդի և տուրիզմի բաժնի առաջատար մասնագետ

Օրակարգ

Տաշիր համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում առաջարկների նախնական գնահատման փուլի արդյունքների ավարտի ամփոփում:

Լսեցին՝

1.Հանձնաժողովի նախագահի տեղակալ Նաթելլա Մուրադյանին՝

-ողջունեց հանձնաժողովի անդամներին, ներկայացրեց ստացված առաջարկները, ստացված առաջարկների կարևորությունը՝ բնակիչների վստահության մակարդակի բարձրացման ուղղությամբ՝ արձանագրելով նախապատրաստական փուլի ավարտը:

2. Հանձնաժողովի քարտուղար Աստղիկ Բարոյանին՝

-ներկացայցրեց իրազեկման փուլում առաջացած խնդիրները,

-ներկայացրեց իրազեկման և առաջարկների ստացման ժամանակ առաջացած խնդիրների լուծումները և առաջարկեց հետագա տարիներին իրազեկման փուլի համար ներկա փորձի վրա հիման վրա գործիքակազմ մշակել՝ ավելի արդյունավետ դարձնելով այս փուլերը:

-ներկայացրեց ստացված առաջարկները:

Լսելով հանձնաժողովի նախագահի տեղակալի և քարտուղարի ներկայացրած տեղեկատվությունը, քննարկելով հետագա անելիքները, Տաշիր համայնքի մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

1. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրազեկման և առաջարկների ներկայացման փուլերը համարել ավարտված՝ դրական արդյունքներով,

2. Սկսել առաջարկների նախնական գնահատման փուլը՝ ժամկետը նշանակելով սույն թվականի հունիսի 2-ից մինչև հունիսի 13-ը:

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ն. Մուրադյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Բարոյան